«Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ է»
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
գիտական խորհրդի
29.09. 2011թ. թիվ 1 նիստում

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի

1. Ընդհանուր դրույթներ

1.1 ՀՀ կառավարության 2006թ. նոյեմբերի 9-ի 1791-Ն որոշման հիման վրա՝ սույն կանոնակարգը սահմանում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի (այսուհետ՝ կրթահամալիր) գիտական խորհրդի կազմի ձևավորման, նիստերի նախապատրաստման և աշխատանքի անցկացման կարգը:

1.2 Կրթահամալիրի գիտական խորհրդի կանոնակարգը «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ կանոնադրության 22.5 կետի «ա» ենթակետի հիման վրա հաստատում է կրթահամալիրի գիտական խորհուրդը:

1.3 Կրթահամալիրի գիտական խորհուրդը ունի իր անվամբ կլոր կնիք:

2. Կրթահամալիրի գիտական խորհրդի իրավասությունը

2.1 Կրթահամալիրի գիտական խորհուրդը (այսուհետ՝ գիտական խորհուրդ) լուծում է կրթահամալիրի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության կազմակերպման, պլանավորման և կառավարման հիմնահարցերը:

2.2 Գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է: Գիտական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ:

2.3 Գիտական խորհուրդը՝

ա) հաստատում է իր կանոնակարգը և լրացումներ ու փոփոխություններ է կատարում նրանում.

բ) առաջարկություն է ներկայացնում պետական կառավարման լիազորված մարմնին դիմորդների ընդունելության կանոնների վերաբերյալ.

գ) մշակում է կրթահամալիրի սովորողների ավարտական որակավորման պայմանները, մագիստրատուրայի, ասպիրանտուրայի, դոկտորանտուրայի հայցորդության կանոնները.

դ)կրթահամալիրի պետին ներկայացնում է առաջարկություններ ֆակուլտետների, ամբիոնների, կառուցվածքային ստորաբաժանումների ստեղծման, վերակազ-մակերպման կամ լուծարման վերաբերյալ.

ե) Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետին առաջարկություններ է ներկայացնում հեռակա և վճարովի (առանց պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքի) ուսուցման տեղերի թիվը՝ պետական պատվերով սահմանված տեղերի թվից դուրս սահմանելու վերաբերյալ.

զ) քննարկում է կրթահամալիրի գիտական գործունեության գլխավոր և հեռանկարային ուղղությունները, լսում զեկույցներ գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների վերաբերյալ.

է) կրթահամալիրի պետին է ներկայացնում մասնագիտությունների և մասնագիտացումների անվանացանկի վերաբերյալ առաջարկությունները՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության միջոցով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելու համար.

ը) կրթահամալիրի գիտամանկավարժական գործունեություն իրականացնող անձանց սահմանված կարգով պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ է շնորհում և ներկայացնում Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովի հաստատմանը.

թ) սահմանված կարգով հաստատում է կրթահամալիրի ասպիրանտների և հայցորդների գիտական ղեկավարների թեկնածուները և ատենախոսության թեմաները.

թա) տպագրության է երաշխավորում գիտական աշխատանքները.
ժ) քննարկում և մշակում է կրթահամալիրի միջբուհական համագործակցության ծրագրերը.
ժա) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ կրթահամալիրի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ լիազորություններ.
ժբ) քննարկում և հավանության է արժանացնում ուսումնական պլանները:

3. **Գիտական խորհրդի կազմը**

3.1 Համաձայն կրթահամալիրի կանոնադրության 22.3 կետի գիտական խորհուրդը կազմված է ի պաշտոնե նշանակվող և ընտրովի անդամներից:

3.2 Գիտական խորհրդի ի պաշտոնե անդամներն են կրթահամալիրի պետը (խորհրդի նախագահ), կրթահամալիրի պետի տեղակալները, ֆակուլտետի պետերը, ամբիոնի պետերը, ուսումնական և գիտական այլ ստորաբաժանումների պետերը, ոստիկանության կադրերի վարչության պետի տեղակալը, ուսանողական խորհրդի նախագահը:

3.3 Գիտական խորհրդի մյուս անդամները ընտրվում են կրթահամալիրի պետի կողմից՝ կրթահամալիրի պետի տեղակալների առաջարկությամբ կամ սեփական նախաձեռնությամբ:

3.4 Գիտական խորհրդի անդամների թիվը չի կարող գերազանցել 50-ը: Ի պաշտոնե նշանակվող անդամների թիվը չի կարող գերազանցել գիտական խորհրդի անդամների թվի 50%-ը: Գիտական խորհրդի անդամների 25%-ը կազմում են կրթահամալիրի սովորողները:

4. **Գիտական խորհրդի աշխատակարգը և նիստերի նախապատրաստումը**

4.1 Գիտական խորհրդի իրավասությունն իրականացվում է հերթական և արտահերթ նիստերի միջոցով:

4.2 Գիտական խորհրդի հերթական նիստերը հրավիրվում են ամիսը մեկ անգամ, արտահերթ նիստերը՝ ըստ անհրաժեշտության՝ պետի կողմից կամ գիտական խորհրդի անդամների մեկ երրորդի գրավոր պահանջով:

4.3 Գիտական խորհրդի նիստերը նախապատրաստում են կրթահամալիրի պետը և գիտական քարտուղարը:

4.4 Գիտական խորհրդի անդամներին նիստի հրավիրման և դրա օրակարգի մասին տեղեկացվում է ամենաուշը երկու օր առաջ, գրավոր ձևով:

5. **Գիտական խորհրդի արտահերթ նիստերի գումարման կարգը**

5.1 Արտահերթ նիստը գումարելու կրթահամալիրի պետին ներկայացված գրավոր պահանջը պետք է ձևակերպի գիտական խորհրդի օրակարգում առաջարկվող հարցերը, դրանց բարձրացման շարժառիթները՝ արտահերթ նիստ պահանջող գիտական խորհրդի անդամների ստորագրություններով:

5.2 Գիտական խորհրդի անդամների գրավոր պահանջը ստանալու պահից 7 օրվա ընթացքում կրթահամալիրի պետը պետք է ընդունի խորհրդի նիստ գումարելու կամ գումարումը մերժելու մասին որոշում:

5.3 Կրթահամալիրի պետը կայացնում է հրաման գիտական խորհրդի նիստի գումարումը մերժելու մասին, եթե.
ա) չի պահպանված արտահերթ նիստը գումարելու պահանջ ներկայացնելու կարգը.
բ) արտահերթ նիստի օրակարգի համար առաջարկված հարցերից ոչ մեկը չի վերապահված գիտական խորհրդի իրավասությանը.
գ) արտահերթ նիստի օրակարգի համար առաջարկված հարցը չի համապատասխանում ՀՀ օրենսդրության պահանջներին:
Գիտական խորհրդի արտահերթ նիստի գումարումը մերժելու մասին գրավոր ծանուցումն ուղարկվում է խորհրդի նիստի գումարումը պահանջող անդամներին:

6. **Գիտական խորհրդի նախագահը՝**

ա) հաստատում է գիտական խորհրդի նիստի օրակարգը և վարում գիտական խորհրդի նիստը.

բ) ստորագրում է գիտական խորհրդի որոշումները.

գ) գումարում է գիտական խորհրդի արտահերթ նիստ.

դ) կազմակերպում է գիտական խորհրդի որոշումների կատարման ուղղությամբ աշխատանքը.

ե) կազմակերպում է գիտական խորհրդի հանձնաժողովների փոխհամագործակցությունը.

զ) ներկայացնում է գիտական խորհուրդը պետական իշխանության մարմինների, այլ արտաքին կառույցների և կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում.

է) սույն կանոնակարգին և նորմատիվ իրավական ակտերին համապատասխան լուծում է գիտական խորհրդի գործունեության հետ կապված այլ հարցեր:

7. **Գիտական խորհրդի քարտուղարը՝**

ա) նախապատրաստում է գիտական խորհրդի նիստերը.

բ) կազմում է գիտական խորհրդի նիստի օրակարգի նախագիծը և այն ներկայացնում է գիտական խորհրդի նախագահի հաստատմանը.

գ) լրամշակման համար հետ է վերադարձնում սահմանված կարգի խախտմամբ ներկայացված որոշումների նախագծերը.

դ) գիտական խորհրդի նիստերի ժամանակ հրապարակում է որոշումների և քննարկվող այլ փաստաթղթերի նախագծերը.

ե) վերահսկում է գիտական խորհրդի որոշումների իրականացումը.

զ) գիտական խորհրդին զեկուցում է ընդունված որոշումների կատարման վերաբերյալ.

է) իրականացնում է գիտական խորհրդի որոշմամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

8. **Գիտական խորհրդի նիստերի քվեակազմը**

8.1 Գիտական խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների երկու երրորդը:

8.2 Գիտական խորհրդի անդամների ներկայությունը գրանցում է գիտական քարտուղարը՝ նիստն սկսելուց առաջ: Քվորումը չապահովելու դեպքում պետի որոշմամբ կարող է գրանցումը երկարաձգվել մինչև քվորումի ապահովումը կամ հետաձգվել նիստը:

8.3 Գիտական խորհրդի քվեակազմի բացակայության պատճառով հետաձգված նիստը նույն օրակարգով գումարվում է ընդհանուր կարգով:

9. **Գիտական խորհրդի նիստերի անցկացման ընթացակարգը**

9.1 Կրթահամալիրի պետը, բացելով նիստը, հայտարարում է քվեակազմի առկայությունը և քվեարկության է դնում օրակարգը:

9.2 Գիտական խորհրդի անդամները կարող են օրակարգի համար առաջարկել հարցեր, որոնք դրվում են քվեարկության:

9.3 Օրակարգի հարցերի քննարկման կարգը, հիմնական և հարակից զեկույցների, ելույթների տևողությունը նախագահի առաջարկությամբ որոշում է գիտական խորհուրդը:

10. **Գիտական խորհրդում քվեարկության կարգը**

10.1 Գիտական խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդի նիստերին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ, եթե խորհուրդը քվեարկության այլ կարգ չի սահմանում:

10.2 Գիտական կոչումների ներկայացման քվեարկությունը կարող է կատարվել փակ, գաղտնի:

10.3 Փակ, գաղտնի քվեարկությունից առաջ գիտական խորհրդի որոշմամբ կարող է ստեղծվել հաշվիչ հանձնաժողով՝ գիտական խորհրդի անդամների կազմից:

10.4 Հաշվիչ հանձնաժողովը կազմակերպում և անցկացնում է քվեարկությունները, պարզաբանում է քվեարկության ընթացքում առաջացող հարցերը և քվեարկության կարգը, ապահովում է քվեարկության կարգը, կազմում է արձանագրություն քվեարկության արդյունքի մասին և ներկայացնում այն գիտական խորհրդի հաստատմանը:

10.5 Փակ, գաղտնի քվեարկության քվեաթերթիկները պատրաստվում են գիտական քարտուղարի կողմից՝ մինչև գիտական խորհրդի նիստը:

10.6 Քվեաթերթիկում պետք է նշվեն գիտական խորհրդի նիստի անցկացման ամիս-ամսաթիվը, տարին, կարգային համարը, քվեարկության դրվող հարցի հստակ ձևակերպումը, քվեարկության տարբերակները (կողմ, դեմ):

10.7 Քվեաթերթիկի հակառակ երեսին ստորագրում է գիտական քարտուղարը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև հաշվիչ հանձնաժողովի նախագահը և անդամները:

10.8 Քվեաթերթիկը համարվում է վավեր, եթե դրանում քվեարկվել է մեկ տարբերակ:

10.9 Քվեարկությունից առաջ գիտական քարտուղարը (կամ հաշվիչ հանձնաժողովի նախագահը) տեղեկություններ է հաղորդում քվեարկության և քվեաթերթիկը լրացնելու կարգի մասին:

10.10 Հաշվիչ հանձնաժողովի անդամները կամ գիտական քարտուղարը առանձին սենյակում բացում են քվեատուփը և իրականացնում են քվեարկության արդյունքների հաշվառում:

10.11 Ձայների հաշվառման արդյունքները ձևակերպվում են հաշվիչ հանձնաժողովի արձանագրության մեջ՝ ստորագրված բոլոր անդամների կողմից և հայտարարվում են գիտական խորհրդի նիստում՝ հաստատման համար:

11. Գիտական խորհրդի որոշումները

11.1 Գիտական խորհրդի որոշումները կենսագործվում են կրթահամալիրի պետի հրամաններով:

11.2 Կրթահամալիրի պետն իրավունք ունի կասեցնելու գիտական խորհրդի այն որոշումները, որոնք չեն բխում նրա իրավասությունից, հակասում են ՀՀ գործող օրենսդրությանը, կրթահամալիրի կանոնադրությանը, կանոնագրքին, սույն կանոնակարգին և ներկրթահամալիրային այլ ակտերին:

11.3 Գիտական խորհրդի որոշումների կասեցման մասին կրթահամալիրի պետի հրամանները պետք է լինեն պատճառաբանված՝ մատնանշելով, թե օրենսդրական և այլ ակտերի որ դրույթներն են խախտվել:

11.4 Գիտական խորհրդի կասեցված որոշումները կրթահամալիրի պետը գիտական խորհրդի նիստում դնում է վերաքննարկման և վերաքվեարկության:

12. Հսկողությունը գիտական խորհրդի որոշումների կատարման նկատմամբ

12.1Կրթահամալիրի պետին ներկայացվող՝ գիտական խորհրդի գործունեությանն առնչվող բոլոր փաստաթղթերը, որոնք պահանջում են կատարում և ենթադրում են պատասխան, ենթակա են հսկողության:

12.2 Գիտական խորհրդի ընդունած որոշումները ենթակա են հսկողության՝ դրանց կատարման նկատմամբ:

12.3 Կրթահամալիրի ստորաբաժանումների պետերը պարտավոր են ապահովել իրենց ստորաբաժանմանը վերաբերող՝ գիտական խորհրդի ընդունված որոշումների կատարումը, ինչպես նաև ներկայացնել գիտական խորհրդի որոշումների նախագծերի նախապատրաստման կամ կատարման համար անհրաժեշտ՝ գիտական խորհրդի նախագահի կամ գիտական քարտուղարի կողմից պահանջվող նյութերն ու տեղեկատվությունը:

12.4 Փաստաթուղթը գիտական խորհրդի նախագահի կողմից հանվում է հսկողությունից, եթե դրանում բովանդակվող հարցերը ամբողջությամբ լուծված են

կամ դրա հեղինակին ըստ էության տրվել է պատասխան: Միջանկյալ պատասխանը, ինչպես նաև փաստաթղթում բովանդակվող հարցերի մասնակի կատարումը հիմք չեն փաստաթուղթը վերահսկողությունից հանելու համար:
12.5 Փաստաթուղթը հսկողությունից հանելու հիմք է հանդիսանում կրթահամալիրի պետի կամ նրա տեղակալի կողմից տրված պատասխան փաստաթուղթը կամ կրթահամալիրի համապատասխան ստորաբաժանման պետի կողմից տրված՝ կատարման մասին տեղեկանքը:

13. Գիտական խորհրդի արձանագրությունը

13.1 Գիտական խորհրդի արձանագրությունը (2 օրինակով) կազմում է գիտական քարտուղարը՝ գիտական խորհրդի նիստն ավարտելուց հետո 3 օրվա ընթացքում: Արձանագրությունը ստորագրում են կրթահամալիրի պետը և գիտական քարտուղարը:

13.2 Արձանագրության մեջ պետք է նշվեն նիստի անցկացման ժամանակը, քվեակազմը, նախագահը, գիտական քարտուղարը, նիստի օրակարգը, ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, քվեարկության արդյունքները, ընդունված որոշումները:

14. Գիտական խորհրդին կից համակրթահամալիրային հանձնաժողովները

14.1 Գիտական խորհրդի որոշմամբ անհրաժեշտության դեպքում ստեղծվում են համակրթահամալիրային հանձնաժողովներ, որոնց կարգավիճակը, կառուցվածքը, իրավասությունը, աշխատանքի կարգը սահմանվում է ՀՀ օրենսդրությամբ, կրթահամալիրի կանոնադրությամբ ու կանոնագրքով, ինչպես նաև սույն կանոնակարգով:

14.2 Համակրթահամալիրային հանձնաժողովի խնդիրն է որոշակի ոլորտի հարցերի ուսումնասիրումը, նախապատրաստումը և դրանք առաջարկության ձևով գիտական խորհրդին ներկայացնելը:

14.3 Համակրթահամալիրային հանձնաժողովների նիստերն իրավազոր են հանձնա-ժողովի անդամների առնվազն կեսի ներկայության դեպքում: Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են:

14.4 Համակրթահամալիրային հանձնաժողովների փաստաթղթերը և եզրակացությունները հաստատվում են նիստին ներկա գտնվող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում վճռորոշ է հանձնաժողովի նախագահի ձայնը:

14.5 Հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն հանձնաժողովի արձանագրության մեջ մտցնել հատուկ կարծիք և այդ մասին տեղյակ պահել գիտական խորհրդին:

15. Անցումային դրույթներ

15.1 Գիտական խորհրդի կանոնակարգի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարվում են գիտական խորհրդի որոշմամբ:
15.2 Գիտական խորհրդի կանոնակարգի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու հարցը ընդգրկվում է գիտական խորհրդի հերթական նիստի օրակարգում:
15.3 Գիտական խորհրդի կողմից ընդունված կանոնակարգը գործում է մինչև նոր կանոնակարգի ընդունումը: